ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ
Պարոն՝ Վ. Հովակիմյանին

«ԼՈՒՍԱՎՈՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ
Պարոն՝ Է. Մարուքյանից
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Բաղրամյան 1, բն. 27

ԴԻՄՈՒՄ

/Դիտորդական առաքելություն իրականացնող դաշինքի անդամի կողմից իրականացվող խախտման վերաբերյալ/

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հարգելի անդամներ,

Անկախ դիտորդ դաշինքի անդամ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանի կողմից «ֆեյսբուք» սոցիալան ցանցի միջոցով 2026 թվականի մայիս 26-ից 27-ը ընկած ժամանակահատվածում երկու անգամ անդրադառձ է կատարվել 2026 թվականի հունիսի 7-ին Ազգային ժողովի համապետական ընտրություններին գրանցված «Լուսավոր Հայաստան» կուսակցության ցուցակի 1-ին համար Էդմոն Մարուքյանի վերաբերյալ:

Մասնավորապես մեկ անգամ գրառման և մեկ անգամ տեսանկարահանման միջոցով հղում է կատարել «Սունկ» կայքով հրապարակված իրականությանը չհամապատասխանող տեղեկատվությանը:

Առանձին հատուկ գրառմամբ թիրախավորել Էդմոն Մարուքային գրելով՝ *«ինձ ամենաշատը զարմացրեց այն, որ Էդմոն Մարուքյանն այս նյութում անցնում է որպես ԼՕՄ...էի, ինչ ասեմ»*[1]: Հրապարակված նույնաբովանդակ տեսանյութով նույնպես թիրախավորել է Էդմոն Մարուքյանին[2]:

<u>Այսպես</u>

ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի 32-րդ հոդվածի համաձայն

1. Դիտորդը, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչը, այցելուն իրավունք ունեն՝

(...)

6) հրապարակայնորեն, այդ թվում զանգվածային լրատվության միջոցներով հայտնելու կարծիք, անելու հայտարարություն՝ ընտրությունների կազմակերպման և անցկացման վերաբերյալ.

7) օգտվելու սույն օրենսգրքով նախատեսված այլ իրավունքներից:

2. Դիտորդը, այցելուն իրենց իրավունքներն իրականացնելիս պարտավոր են դրսևորել քաղաքական չեզոքություն, հրապարակայնորեն որևէ կանխակալ դիրքորոշում չարտահայտել կամ նախապատվելի վերաբերմունք չդրսևորել թեկնածուների, ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) հետ կապված <u>որևէ հարցի նկատմամբ</u>: Դիտորդներն իրենց անձնական դիտարկումները կարող են ներկայացնել ընտրական հանձնաժողովներին դիտորդական առաքելության զեկույցի միջոցով: Դիտորդների բոլոր նզրահանգումների համար պետք է հիմք հանդիսանան իրենց անձնական դիտարկումները:

---

[1] https://www.facebook.com/share/p/1BEsBod1yJ/
[2] https://www.facebook.com/share/r/1CpHnvwRFq/?mibextid=wwXIfr

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆ... ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
ՄՏԵՍ 1614
«27» 05 2026 թ.

*3. Դիտորդը, այցելուն, զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչն իրավունք չունեն միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և քվեարկության ընթացքին, իրականացնելու քարոզչություն կամ **<u>հակաքարոզչություն</u>**, ընտրական հանձնաժողովի անդամներին տալու ցուցումներ, ներկայացնելու պահանջներ, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:*

(...)

Նույն օրենսգրքի 31-րդ հոդվածի համաձայն.

2.(...) Հավատարմագրվելու վերաբերյալ դիմում ներկայացնելիս Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունները և հիմնադրամները պարտավոր են ներկայացնել իրենց դիտորդների վարքագծի կանոնները, որոնք պետք է համապատասխանեն ընտրությունների դիտարկման միջազգային սկզբունքներին և սույն օրենսգրքի կանոնակարգումներին: Հայաստանի Հանրապետությունում գրանցված հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների կողմից ներկայացված դիտորդների վարքագծի կանոնները հրապարակվում են Հանձնաժողովի համացանցային կայքում:

(...)

4.1. Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուժը կորցրած է ճանաչում դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպության (համատեղ հանդես եկող դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպությունների) հավատարմագրումը, եթե հավատարմագրվելուց հետո ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնց առկայության պայմաններում հավատարմագրման վերաբերյալ դիմումը կմերժվեր:

(...)

Ներկայացված իրավանորմերի լույսի ներքո գտնում ենք, որ Անկախ դիտորդ դաշինքի անդամ «Իրազեկ քաղաքացիների միավորում» ՀԿ-ի ներկայացուցիչ Դանիել Իոաննիսյանի կողմից փաստացի իրականացվել է հակաքարոզչություն:

Մասնավորապես սույն դիմումին կից ներկայացված ապացույցներով հիմնավորվում է, որ Դանիել Իոաննիսյանը «Սունկ» կայքով հրապարակված նյութի հիման վրա կոնկրետ թիրախավորել և հակաքարոզչություն է իրականացրել ընտրական պրոցեսում գտնվող «Լուսավոր Հայաստան» Կուսակցության ընտրական ցուցակի առաջին համար Էդմոն Մարուքյանին: Հիշյալ հրապարակումները դիտել են հարյուր հազարից ավել օգտատերեր:

Նման պայմաններում դիտորդական առաքելություն իրականացնող սուբյեկտի կողմից ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի վերաբերելի դրույթների համաձայն խախտվել է ինչպես համապատասխան վարքագծի կանոնները այնպես էլ քաղաքական չեզոքություն դրսևորելու և որևէ քաղաքական ուժի դեմ քարոզչություն իրականացնելու իմպերատիվ արգելքը:

Որպես անկախ դիտորդ խախտել է նաև ընտրություններին մասնակից քաղաքական ուժի ներկայացուցչի վերաբերյալ կարծիք կամ դիրքորոշում ներկայացնելու իրավական իմպերատիվ ձևական պահանջները, մասնավորապես «Լուսավոր Հայաստան» կուսակցության կամ նրա որևէ ներկայացուցչի կողմից ընտրական պրոցեսի մասին որևէ դիտարկման վերաբերյալ պետք է ներկայացվեր համապատասխան զեկույց:

Ուստի գտնում ենք, որ նման հրապարակումների միջոցով Դանիել Իոաննիսյանի կողմից նպատակային և դիտավորյալ իրականացվել է հակաքարոզչություն, քանի որ վերջինս հիմնվել է անհայտ և չճշտված աղբյուրների տեղեկություններին՝ կատարելով վերոնշյալ գրառումը ինչպես նաև հրապարակելով նույնաբովանդակային տեսանյութը: Հետևաբար հարկ է փաստել, որ Դանիել Իոաննիսյանն անաչառ չէ որպես դիտորդ և թիրախավորված հակաքարոզչական արշավ է

իրականացնում «Լուսավոր Հայաստան» կուսակցության առաջնորդի դեմ՝ խաթարելով դիտորդական առաքելության ամենակարևոր սկզբունքներից՝ անաչառությունը:

Բացի այդ հիշյալ նյութը ոչ միայն անհայտ և չճշտված աղբյուրից է այլ նաև կեղծ է և պարունակում է իրականությանը չհամապատասխանող տեղեկություններ:

Հատկանշական է նաև որ հիշյալ տվյալները առիթ և հիմք են հանդիսացել հանրությանը աչքերում անկախ դիտորդ ներկայացող Դանիել Իոաննիսյանի կողմից դիտավորյալ և նպատաուղղված իրականացնել հակաքարոզչություն թիրախավորելով կոնկրետ Էդմոն Մարուքյանին այն ժամանակահատվածում, երբ քաղաքական ուժերը այդ թվում նաև «Լուսավոր Հայաստան» կուսակցությունը գտնվում են նախընտրական քարոզչության ակտիվ փուլում:

Նման պայմաններում գտնում ենք, որ ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ելնելով դիտորդական առաքելության իրականացման համար հիմնասյուն հանդիսացող անաչառության և քաղաքական չեզոքության սկզբունքի պահպանման անհրաժեշտությունից և օժտված լինելով առկա իրավական գործիքակազմով՝ պետք է ուժը կորցրած ճանաչի արդեն իսկ հավատարմագրված, սակայն խախտում թույլ տված կազմակերպության գրանցումը:

Ուստի հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի վերաբերելի դրույթներով,

Խնդրում ենք

Ուժը կորցրած ճանաչել Անկախ դիտորդ դաշինքի անդամ «Իրազեկ քաղաքացիների միավորում» հասարակական կազմակերպության հավատարմագրումը:

Առդիր՝

1. «Լուսավոր Հայաստան» կուսակցության նախագահ Էդմոն Մարուքյանի անձնագր լուսապատճենը,
2. Դանիել Իոաննիսյանի կողմից մայիսի 25-ին իր ֆեյսբուքյան էջում արված գրառման նկարը (screenshot-ը),
3. Դանիել Իոաննիսյանի կողմից իր ֆեյսբուքյան էջում արված տեսանյութը կրիչով:

Էդմոն Մարուքյան

ստորագրությունը

«27» մայիսի 2026թ.